ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հունիսի 2015թ. **N---Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԳԵՎՈՐԳ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Տեր-Ստեփանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա հ.9 հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳԵՎՈՐԳ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գևորգ Տեր-Ստեփանյանը ծնվել է 1907թ. ապրիլի 16-ին Թիֆլիսում, անասնաբույժի ընտանիքում:

1931թ. ավարտել է Վրացական պոլիտեխնիկական ինստիտուտը:

1932թ. տեղափոխվել է Լենինգրադ, աշխատել գրունտների մեխանիկայի բնագավառում, դասախոսել հիմքերի և հիմնատակերի առարկան՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում:

1945թ. տեղափոխվել է Երևան և ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայում զբաղվել ինժեներական երկրաբանության և գրունտների մեխանիկայի հետազոտություններով:

1978թ. աշխատել է ՀՍՍՀ ակադեմիայի գեոֆիզիկայի և ինժեներական սեյսմոլոգիայի ինստիտուտում՝ որպես գեոմեխանիկայի լաբորատորիայի վարիչ:

1939թ. Գևորգ Տեր-Ստեփանյանն ստացել է տեխնիկական գիտությունների թեկնածուի և 1956թ. դոկտորի գիտական աստիճաններ՝ Լենինգրադի ինժեներական-շինարարական ինստիտուտում:

1960թ. եղել է պրոֆեսոր, 1977թ.՝ ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1996թ.՝ ԳԱԱ ակադեմիկոս:

Ակադեմիկոս Տեր-Ստեփանյանը հրատարակել է 7 մենագրություն և 197 գիտական հոդվածներ: Երկու գիրք և 63 հոդված տպագրվել են արտասահմանում:

Գևորգ Տեր-Ստեփանյանը մահացել է 2006թ. դեկտեմբերի 23-ին:

Տեխնիկականն գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գևորգ Տեր-Ստեփանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտա հ. 9 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ. Մարտիրոսյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳԵՎՈՐԳ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գևորգ Տեր-Ստեփանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳԵՎՈՐԳ ՏԵՐ-ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գևորգ Տեր-Ստեփանյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ